

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խ. Արովեանի անունի ՀԴՄՀ

danielyansuren21@aspu.am

ORCID iD: 0000-0001-7033-2041

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-486

ԻՍԱՀԱԿԵԱՆ – ՕՇԱԿԱՆ. ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր - Յակոբ Օշական, Աւետիք Իսահակեան, արեւելահայ բանաստեղծութիւն, վերլուծական շերտեր, գրական աղերսներ:

Ամփոփում

Քննութեան ենթակայ երկու հեղինակներն էլ՝ թէ՛ Աւետիք Իսահակեանը, թէ՛ Յակոբ Օշականը, արուեստի ճանաչողութեան բարձր սահմաններ են հատել: Չնայած գրական նիւթի հանդէպ ընդհանուր նախասիրութիւններին (ինչպէս օրինակ՝ բանասիրական ժանրերը)՝ յաճախ վերլուծական շերտերում խիստ տարբեր հայեացքներ են դրսեւորել: Այդ տարբերութիւնները երբեմն հասել են սուր եւ հակադիր ձեւակերպումների, ինչպէս վկայում են արեւելահայ բանաստեղծութեան Օշականի քննակերպերը, որոնք մի դէպքում կարող են վերաբերել Իսահակեանի բնագրերին («Աբու-Լալա Մահարի»), միւս դէպքում՝ գրականութեան պատմութեան ընդհանրական հարցադրումների մէջ հեղինակի դերի որոշարկմանը («Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց»): Օշականի մօտեցման մէջ նկատելի է գրական երկու՝ արեւելահայ եւ արեւմտահայ թերի համադրութեան ջանքը, որը ոչ միայն նպատակ ունի անդրադառնալ այս կամ այն հեղինակին, այլև առաջին հերթին ներկայացնել տիպաբանական ընդհանրութիւններն ու տարբերութիւնները: Գնահատականներ, որոնք գրականագիտական բանավեճերի ու քննարկումների աղիթ են դարձել: Ինչ մնում է Իսահակեանին, ապա նրա դիտարկումները առաջին հերթին երեւան են գալիս նամակներում եւ դրսեւորում են ինչպէս Օշականի բնագրերի վերաբերեալ գնահատականներ («Շահապազ» վիպակը), այնպէս էլ հեղինակի անձնական վերաբերմունքի շերտեր: Չնայած միմեանց հանդէպ անհանդուրժողութեան՝ կեանքի վեր-

ջին շրջանում Օշականի պարագային տեսանելի է վերաթեւորումների ու վերագնահատումների փորձը, երբ Իսահակեանին դիտարկում էր «անկինադարձ մը»՝ ոչ միայն «հայոց հայրենիքի պսակազարդ վարպետ», այլև՝ «Սփիւոքի վրայ ճառագայթող գեղեցկութիւն»: Ահա այս գնահատականների անցած ճանապահն է, որ փորձել ենք ուրուագծել այս յօդուածում:

SUREN DANIELYAN

Doctor of Philology, Professor

ASPU after Kh. Abovyan

danielyansuren21@aspu.am

ORCID iD: 0000-0001-7033-2041

ISAHAKYAN – OSHAKAN: ON TYPOLOGICAL ISSUES

Keywords: Hakob Oshakan, Avetik Isahakyan, Eastern Armenian poetry, analytical layers, literary connections.

Abstract

Both authors under consideration—Avetik Isahakyan and Hakob Oshakan—have crossed the high boundaries of artistic cognition. Despite their shared preference for certain literary materials (for example, folklore genres), they often expressed sharply different views in analytical layers. These differences sometimes reached acute and opposing formulations, as evidenced by Oshakan's assessments of Eastern Armenian poetry, which in some cases could relate to Isahakyan's texts ("Abu-Lala Mahari"), and in others to the determination of the author's role within broader questions of literary history ("The Balance of Eastern and Western Armenian Literatures").

In Oshakan's approach, one can observe an effort to compare the two branches of literature—Eastern Armenian and Western Armenian—aiming not only to analyze individual authors but also to present typological commonalities and differences. Such evaluations have sparked scholarly debates and discussions.

As for Isahakyan, his observations appear primarily in letters, reflecting both assessments of Oshakan's texts (the novella "Shahpaz") and

layers of personal attitude toward the author. Despite their mutual intolerance, in the final period of his life Oshakan attempted reevaluations, presenting Isahakyan as a “turning point,” not only as the “crowned master of the Armenian homeland” but also as a “beauty radiating upon the Diaspora.” It is precisely the trajectory of these evaluations that we have attempted to outline in this article.

СУРЕН ДАНИЕЛЯН

Доктор филологических наук, профессор

АГПУ им. Х. Абовяна

danielyansuren21@aspu.am

ORCID iD: 0000-0001-7033-2041

ИСААКЯН – ОШАКАН: ВОКРУГ ТИПОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМ

Ключевые слова: Акоп Ошакан, Аветик Исаакян, восточноармянская поэзия, аналитические слои, литературные связи.

Аннотация

Оба автора, находящиеся в центре внимания — Аветик Исаакян и Акоп Ошакан, — перешагнули высокие пределы художественного познания. Несмотря на общую приверженность к определённому литературному материалу (например, жанрам фольклора), они нередко проявляли резко отличающиеся взгляды в аналитических пластах. Эти различия порой достигали острых и противоположных формулировок, о чём свидетельствуют оценки Ошакана восточноармянской поэзии, которые в одних случаях могли касаться текстов Исаакяна (“Абу-Лала Махари”), а в других — определения роли автора в более общих вопросах литературной истории (“Равновесие восточноармянской и западноармянской литературы”).

В подходе Ошакана заметно стремление сопоставить две ветви литературы — восточноармянскую и западноармянскую, — целью которого было не только осмысление отдельных авторов, но прежде всего вы-

явление типологических общностей и различий. Подобные оценки ставились поводом для научных дискуссий и полемик.

Что касается Исаакяна, то его наблюдения проявлялись главным образом в письмах, где находили отражение как оценки произведений Ошакана (повесть “Шахпаз”), так и личное отношение к автору. Несмотря на взаимную нетерпимость, в последние годы своей жизни Ошакан предпринял попытку переоценок, представляя Исаакяна как “переломный момент”, не только “увенчанного мастера армянского отечества”, но и “красоту, излучающуюся на Диаспору”. Именно этот путь оценок мы попытались очертить в настоящей статье.

Ներածութիւն

Կարելի է, անշո՛ւտ, արձանագրել, որ գրական դիմորոշ հարցադրումներում ազգային ինքնության մեկնության ամենահետաքրքիր շրջանը եղել է մնում է քսաներորդի դարասկիզբը, երբ ընկերային արժեւորումների շուրջ հայեացքների բազմապիսութիւնը ստուգութեան լայն ճանապարհ բացեց դէպի եւրոպական պատուհան: Այստեղ առանձնանում էին գրական մտքի նոր ուժերը, որոնք իւրովի էին հասկանում գրականութեան նշանառութիւնը, նրա՝ կեանքն ընկալելու եւ ժողովրդի առօրեան, հոգեբանութիւնը տեսնելու, վերակազմելու ու գրականութիւն ներմուծելու պահանջները, համաշխարհային գրական աղերսները:

Թէ՛ Աւետիք Իսահակեանը, թէ՛ Յակոբ Օշականը, յատկապէս այդ շրջանում, արուեստի ճանաչողութեան բարձր սահմաններ էին հատել՝ արժեւորելով նրա զարգացման եւրոպական ճանապարհը: Տարբեր էին Ա. Իսահակեանի եւ Յ. Օշականի մուտքի եւ ազդեցութիւնների ընկալումների սահմանագծերը, սակայն յամառ որոնումները նրանց հասցրին ժողովրդականի, ռուսականի եւ եւրոպականի նոր հայեացքի եւ հետաքրքրութիւնների հրապոյրի տիրական ճանաչման, ինչը պիտի յանգեցնէր երկու անհատականութիւնների՝ թէկուզ ներհակ ճանաչումների ընթացքի: Չմոռանանք, որ տարբեր էին նաեւ նրանց տեսական հակումները եւ պատրաստութիւնները:

Այդ ամէնը, սակայն, միաժամանակ մասնաւորում էր գրական նիւթի հանդէպ ընդհանուր նախասիրութիւնների շրջանակ, ինչպէս,

օրինակ՝ բանահիսապական ժանրերի հանդէպ հետաքրքրութիւնը, «յաւերժական» թեմաների ներառման սուր հակումը, գնահատումներում ազգային-քաղաքական տագնապների ենթաբնագրի շահագրգիռ առկայութիւնը, երբ չէին կարող խուսանաւել վերլուծական տարբեր շերտերից: Այդ տարբերութիւնները երբեմն հասնում էին հակադիր ձեւակերպումների, ինչպէս վկայում են արեւելահայ բանաստեղծութեան շուրջ Յ. Օշականի քննակերպերը, որոնք մի դէպքում կարող էին վերաբերել Աւ. Իսահակեանի բնագրերին («Աբու-լալա Մահարի»), միւս դէպքում՝ գրականութեան պատմութեան ընդհանրական հարցադրումներին, հեղինակի դերի համադրման փորձից բխող որոշարկումին («Ձուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեան»):

Յ. Օշականի մօտեցման խորքում նկատելի է արեւելահայ եւ արեւմտահայ թեւերի համադրութեան ջանքը, որը նպատակ ունէր վերհանելու տիպաբանական ընդհանրութիւններ ու տարբերութիւններ: Սրանք միաժամանակ գնահատականներ էին, որոնք բռնում բանավեճերի ու քննարկումների լրացուցիչ առիթների հնարաւորութիւն էին:

Ինչ վերաբերում է Աւ. Իսահակեանին, նրան էլ քնորոշ էին համադրական դիտարկումները: Եւ այս առումով նա էլ իր հերթին քննադատական սուր սլաքների տակ է պահում Յ. Օշականին՝ յաճախ երեւան հանելով ենթակայական շերտեր:

Մէկ գրականութիւն, երկու հայեացք

Նախ, նշենք, որ Յ. Օշականի՝ դարասկզբի հայ գրական արժէքների՝ ի մի բերուած յետահայեաց գնահատութիւններում երեւան է եկել տեսողութեան անակնկալների իւրատեսակ կարգ, որոնցից առանձնացրել ենք Պէյրուֆի «Ազդարար» շաբաթաթերթի մէջ 1951-ի վերջաւորութեան տպագրուել սկսած, մինչ այդ անտիպ «Ձուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեան» գիտական աշխատասիրութեան ուշագրաւ ու համարձակ դրոյթները, որոնք մէկ տասնամեակ առաջ, իբրեւ դասախօսութիւնների շարք, Յ. Օշականը հասցրել էր ներկայացնել Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի իր սաներին: Այստեղ, ռուսական եւ արեւմտեան համընդհանուր ազդեցութիւնների քննական շրջանակում, արդիւնաւոր զուգահեռներ է

անցկացրել Խ. Աբովեանի, Յովհ. Թումանեանի, Աւ. Իսահակեանի, Վ. Տէրեանի՝ մի կողմից, եւ միւս կողմից՝ Մ. Պէշիկթաշլեանից սկիզբ առնող ու դէպի Դ. Վարուժան ու Վ. Թէքէեան ձգուող համադրական ճանաչողական կերպերի միջեւ:

Ընդ որում՝ նա նկատում է՝ «Եթէ Տէրեանով քերթողութիւնը քայլ մը առաւ դէպի նրբութիւն եւ նիւթերու ինքնապայութիւն, Չարեանին էր վերապահուած գոյներուն մեծ հարցին լուծումը: Միայն թէ՝ Չարեանը ոչինչ կը պարտի արեւելահայոց: Չայն կազմած են Եւրոպան եւ արեւմտահայը: Իր լեզուն իսկ աննշան յարդարումով մը ենթակայ է մեզի: Գրեթէ բանաձեւի վիճակ ունի այս հարցը անոնց քերթողութեան մէջ: Բոլորին մօտն ալ այս զգայարանքին բացարձակ չգոյութիւնը կը թուի գալ հիմնական նկատումէ մը, որով քերթուածը կը դառնայ վարդապետական կամ իմացական կառոյց՝ առանց զգացական տարրի: Մարդիկ հոն կը գրեն ոտանաւոր՝ բան մը ապացուցելու կամ սորվեցնելու համար: Ամէնէն նկարչագեղ բնութեան ծոցին ապրող սա զանգուածը, ո՞ր հրաշքին գնովը այսքան կոյր կ'ըլլայ այդ գեղեցկութեանց դէմ: Կ'ըսեն, թէ հրաշագեղ Լոռին անդրադարձ մը չունի Թումանեանի գործին մէջ, ու ճիշդ է ասիկա» (Օշական, 1999: 61):

Նախ, բերենք մեր տարակուսանքը՝ արդեօ՞ք այդպէս է: Եթէ ինքն իրեն առնուազն դիտում է գրական աշխարհի մեկնաբաններից, անկարելի է, որ վրիպած լինէր Թումանեան–բնութիւն ներքին թելադրանքի, գոնէ մասնակի հանրաճանաչ բացայայտումներում: Ընթերցողի ուշադիր աչքն ակամայ, բայց եւ անվրէպ, կարող է նկատել առնուազն նախորդների եւ, դրան գումարենք՝ մեր ջանքը, «թէկուզ մասնակի», չասելու համար՝ «մակերեսայինի» տեսողութեամբ, տեսանելի դարձնելու բնութիւն-Թումանեան առընչութիւնը իբրեւ առաջնային եւ բնութագրիչ գիծ՝ երեւան հանելով նրա ծագման աւանդական բացորոշ ճանաչումը:

Բնական է, որ Յ. Օշականի կարծիքը բնապաշտ Յովհ. Թումանեանի ու Լոռուայ աշխարհի, իր ստացած ներզգայութիւնների շուրջ, արտառոց է առնուազն անճշդութեամբ ու անբնականութեան դրսեւորումով, երբ այնքան դրանք տեսանելի էին, այսինքն՝ ներթափանցո-

լած Յովի. Թումանեանն ու Լոռուայ բնութեան ներգործած զգայութիւնները:

Կամ՝ ուրիշ փաստ. նոյնքան անբնական ու կասկածելի պիտի դիտել Չարենց երեւոյթի ճանաչման հարցում Յ. Օշականի մօտեցման վերապահ արժեւորումը¹, այն էլ արդէն քսաներորդ դարակէսի

¹ Այնուհանդերձ նիւթի մէջ Յ. Օշականի հետապնդած միտքը մնում է արեւելահայ գեղարուեստական մտածողութեան ուղղութեան ինքնութեան փնտռողութիւն, ինչպէս ինքն է մասնաւորում՝ «առողջ կոշտութեան, հաստ հարազատութեան, գեղեցիկ հարստութեան, առաքինութիւններ՝ որոնք կարծես թէ ժամանակ ունին փոխուելու, արտայայտուելու համար մեր ժողովուրդին իմացական նրբութիւնը, զգացական խորութիւնը... այն ազդեցիկ, ինքնիր մէջ տրտում, բաց արտաշուշ ոճը, որով մարմին դարձան մեր կաթողիկէները, թեւի եղան մեր շարականներն ու ժողովրդական գմայելի երգերը, որոնք դէմքն իսկ են Հայ հոգիին» (Օշական, 1999: 37), ինչի տակ հասկանում է քաղաքական համայնավար մոլորութիւնը ի վերջոյ յաղթահարելու կամքը. «Բաց ու կր կարողայ,- գրում է նա կրքոտութեամբ,- «Էլքը Հայաստանի»ի պղտոր հեղեղը, Չարենցի միջանկեան նախադասութիւնները՝ հասնելու համար Չարեանի (բնականաբար, նկատի ունի Կոստան Չարեանին – Ս.Դ.) նշովապիտ plasticqueին, չի կրնար անտարբեր մնալ հիմնական երեսօյի մը առջեւ, որ կարողութիւնն է մեր ժողովուրդին: Անոր հանդարտ եղափոխմանը, անոր պայմաններուն եւ պեղքելուն ինքզինքը տարօրէն դիւրաւ աստակ բնող այս ժողովուրդը կը դառնայ մայրը իր ժամանակին, դիւնադողը իր ճակատագրին...: Ինչպէս հետախաղաղ կորսուեցան յունական բարբարոսութիւնը, **ունիթո-նալկան** խժոժութիւնը եւ նոր ժամանակներու անուպայ թուրքերը (սա խիստ ու անհանդուրժող տեսողութեան շարունակական գնահատութեան եղանակի բնորոշութիւն է՝ ուղղուած խորհրդային բարբազրութեան ընկալումների դէմ, ինչին յաջորդում է հեղինակի մոլեգին մերժման արդարացուած յոյսը – Ս.Դ.), այնպէս ալ կը հաւատամ, թէ արեւելահայ բարբառը պիտի թօթափէ օտարութիւնը, գոր պլլած են իր վզին քաղաքական խստեռանդն գործիչները, անոր հողերուն վրայ դիզելով անընթանելի ծանրութիւններ (Չենք կրնար **Մեծամասնական** (բոլշեիկեան – Ս.Դ.) օրպէտք մը աչքէ անցնել, առանց խեղդուած լոլլալու այս մեղքերէն)» (Օշական, 1999: 37-38:– Ընդգծումը՝ բնագրում:– Ս.Դ.):

Նա յորդորում է ի մտի պահել, որ արեւմտահայ գրամշակութային կենտրոնները՝ Պոլիս, Վենետիկ, Իզմիր, «հազարաւոր մորմներով հեռու են հայրենիքէն, եւ ասիկա զանցառելի պատճառ մը չէ (չշփոթել Մոսկուան իր «Հիսախախայր»ով) երեսօյին առջեւ: Լյիս հանդէսը իր 5-6 տարուան կեանքով թուական մըն է եւ ոչ ուրիշ բան: Արեւելահայ գրականութիւնը մշակուեցաւ Թիֆլիս, ուր տարր հազարի զանգուած մը ունեցանք: Երեւանէն Թիֆլիս մէկ առ քսանը չէ այն ճամբուն, որ Վանէն Պոլիս կ'առաջնորդէ» (Օշական, 1999: 36):

Յ. Օշականը նկատի ունէր 19-րդ դարի 50-60-ական թթ. արեւելահայ շրջանը, որն արդէն ապրում էր համեմատութեան առումով ազգային գրամշակութային աշխոյժ ժամանակներ, ինչն արեւմտահայ գործչի համար այնքան է տեսանելի չէր եւ նախահիմք կարող էր լինել նկատելիօրէն անհաղորդ մնալու արեւելահայ գրական զարգացումներին եւ յայտարարելու, թէ՝ «ԺԹ դարու երկրորդ կէտը բոլորովին տարբեր

մատոյցներում, երբ անհանդուրժելի ժխտական կրքով արեւելահայ բանաստեղծին դասում էր խորհրդային գաղափարների սպասարկու արուեստագետների կարգին՝ զարգացնելով առնուազն զարմանալի այն մտայնութիւնը, թէ «*Իրողութիւն է, որ Չարենցի շինծու համբաւը, գերակառոյց վարկը բան չէ աւելցուցած արեւելահայ քերթողութեան: Իրականութիւն է, որ յետ-պատերազմեան 20-30 անունները արեւմտահայ քերթողութեան գրեթէ ոչինչ բերին*» (Օշական, 1999: 77):

Սխալ չէ՝ նաեւ գնահատութեան այն կերպը, որը արեւմտահայ Յ. Օշականը ծաւալում է՝ զանց առնելով հապճեպ վերաբերմունքը արեւելահայ մտայնութեան նոր դրսեւորումի հանդէպ, շրջանցելով ընկալման, այսպէս կոչուած, «*աղանդաւոր կեցուածքի*» կամ «*արեւմտահայ միտքի մը պահանջքները*», երբ բացում է իր միտք բանին. «*Այս խստութիւնը, - գրում է նա, - մի՛ վերագրէք ո՛չ աղանդաւոր կեցուածքի, ո՛չ ալ արեւմտահայ միտքի մը պահանջքներուն*» (Օշական, 1999: 60), ինչը հասցնելու է գոյների ընկալման նոր իմաստաւորման՝ գոյնի բանաստեղծական անակնկալ մուտքի: Իսկապէս, Յ. Օշականը կարծես խանդավառ է իր յայտնութիւնից՝ «*Քերթուածի մը մէջ գոյներու շարութիւնը fausse position (թիւր վիճակ- Ս.Դ.) կը ստեղծէ: Չմոռնալ նոյն արեւն, որ մինչեւ Ռոմանթիզմ բանաստեղծները ժուժկալ եղած են գոյնին հանդէպ: Ի՞նչ դժբախտութիւն, որ արեւելահայ քերթողութիւնը ռոմանթիզմ չունեցաւ (ընդունենք, որ սա վիճարկելի, սուր, խորքի մէջ՝ անընդունելի գնահատութեան կերպ է կարծես, մասնաւոր*

ժողովուրդ մը կը հանէ նայուածքին դէմ ամէն անոնց, որոնք մեր պատմիչներուն վրայով յոյսն են հետապնդած այդ ժողովուրդին սրտազարկը գտնելու ու զայն հաշտեցնելու ինքնիրեն» (Օշական, 1938: 121): Խօսքի հեռագնայ միտքն անակնկալ շահագրգիռ խորք է ձեռք բերում արժեւորման տեսակետից. «*Սիւիտքի մեր եղբայրները, պատրաստուած իրենց հոգեբանութեամբ մը կրնան դիմատրել իրենց շրջապատին բիւրատր հակադրեցութիւնները, հասկնալ ու սիրել զանոնք, պարպուիլ բոլորովին դարեւորն ընկնելու կազմող պապենական իրենց հալածութիւններէն ու Ռաֆֆիի յուզած հարցերուն մէջ թունակօր, մեղադրամայօր ու աւանդ՝ նաեւ Էկզօթիք թանսներ* հաստատել, ու ասիկա՝ առանց տատապելու: Միւս կողմէ մեր հայրենիքին մեծիմաստ դարբնողները կրնան երջանկօրէն մակադուիլ իրենց մտածողութեանց արդար, պարզ, ամենահաս պարունակին մէջ, իրենց փառախի մուտքին դնելով նոր ցուցատախտակներ, ու մեր ժողովուրդին գերագոյն տազնապար վերածելով պապէս նաբուած խոտի, ոչխարացին հանգիստի հարցի մը, իրենցմէ դուրս ուրանալով հարկիւր հազարներու հասնող բազմութիւններուն ողբերգութիւնը» (Օշական, 1938: 121:– Ընդգծումները՝ բնագրում:– Ս.Դ.):

րապէս երբ յայտարարում է, թէ իբր «.../իր (արեւելահայ քերթողութեան – Ս.Դ.) *ռոմանթիզմը եղաւ վարդապետական, ազգայնական, բայց երբեք գրական*» (Օշական, 1999: 60):

Սակայն նկատելի է, որ Յ. Օշականը ծայրայեղութիւնների շարքը փորձում է հիմնաւորել նոր «բարդոյթներով»՝ հետեւողականօրէն մատնանշելով իր ապրած յուսախաբութեան անխուսափ, բայց եւ ենթակայական ընկալումները, որոնցում ցցուն է ընդհանրացած քննադատական քմահաճ վերաբերմունքը, երբ նշում է, որ գեղարուեստական առումով քիչ թէ շատ իրեն կարող է բաւարարել թերեւս միայն մէկ գործ. «*Երբ աչքէ անցընենք բազմահատոր արտադրութիւնները արեւելահայ քերթողութեան, մեզի համար անկարելի պիտի ըլլայ կանգ առնել գոնէ քանի մը հատին առջեւ, որոնք իբր յղացում ու իրագործում, իբր ներշնչում եւ իբր արուեստ, զինաթափ ընէին մեզ: (Այս փորձը եւս կատարել եմ անոնց ամէնէն վաւերական քերթողին՝ Թումանեանի գործին վրայ – քառասունէ աւելի այդ քնարական քերթուածներուն մէջ հա՛ւր մը միայն կրնամ յիշել ձեզի, զոր կարելի է կարդալ յուզումով: «<ին օրինութիւն»ն է արիկա: Յովհաննէսեանի, Իսահակեանի որեւէ քերթուածը, նոյնիսկ ամէնէն կատարեալ նկարուածը, միշտ պիտի թերանայ: Կա՛մ նիւթի անկանոն մշակում, կա՛մ արտայայտութեան անխնամութիւն, կա՛մ տափակութիւն, կա՛մ խժութիւն, անպայման պիտի գան՝ վիրաւորելու համար այդ կտորին համեմատական արժէքը: Չեմ կրնար Գամառ-Քաթիպային քնարական քերթուածները յանձնել ձեր վայելքին: Վահան Տէրեանին մէկ-երկու երաժշտական նուրբ յօրինումներ՝ դժբախտաբար՝ խորքով աղքատ: Կ'ուրանամ ստեղծագործ տարրական շնորհը» (Օշական, 1999: 75-76): Մնում է առկախ գլխաւոր հարցադրումը՝ որտեղից թերարժէքութեան այս բարդոյթը:*

Եւ աւելին՝ «*Թերեւս իոն է բանալին խոշոր սա անոմալիին:... Ինչպէ՛ս կ'ըլլայ,- տարակուսում է տեսաբանը,- որ հարիւր տարուան քերթողութեան մը մէջ մեզի զլացուի վայելքը մեր երկրին պատկերացումին՝ գոյներու եւ գիծերու տիրական հարազատութեամբ մը: Ո՞րն է քերթուածը, ուր ինծի տրուէր հաստատել այն անփոխարինելի շքեղութիւնը ստեղծաշարներու (գոյներէն կ'ուզեմ խօսիլ), որով կը թրթռայ*

«Արեւելահայ Հայաստանը» Լինչին: Չկայ» (Օշական, 1999: 60-61),- ինքն էլ այսպէս անվերապահ ամփոփում է ենթակայական խորքով նման հարցադրումը եւ հերքման փորձը:

Խիստ է, անշո՛ւշտ, երեւի արտառոց կամ անսովոր, գուցէ եւ մատուցման ձեւի՝ Յ. Օշականին բնորոշ սկզբունքով կամ, ինչպէս դիպուկ ինքն էլ ձեւակերպում է՝ իր ենթակայական տեսողութեամբ, արեւմտահայ բանաստեղծութեան շուրջ դիտարկումը, «*դժբախտաբար, գրական մոթիֆի*» վերածած, որի ծագումը, բխեցնում է ուղղակի Վենետիկի «դպրոցից», «*բայց արդէն շինուած, կառուցուած*», այնուհանդերձ եւ, բնաբուխ ցաւ ապրելով, «...որ ոչ մէկ արեւմտահայ քերթուած չէ յաջողած նուաճել յղացքը» (Օշական, 1999: 35): Դա այդպէս է, քանի որ, ինչպէս եզրայանգել է՝ «*մոթիֆը կու գայ հեռուէն ու դուրսէն (Վարուժան, Սիամանթօ, Թէքէեան, պտուղն են մեր նոր տառապանքին, անոր՝ զոր իւրաքանչիւրս զգացած ենք մեր ջիղերով): Խրիմեանի, Սրուանձտեանցի եւ գաւառացիներու մօտ աւելի հանդուրժելի եւ աւելի յաջող է այդ յղացքը, քանի որ գրական մոթիֆ չէ, այլ՝ կեանքի աղբիւր մը, ներշնչման ուժ մը, հոգիի աշխարհի մը*» (Օշական, 1999: 35): Ճշգրիտ նկատառումով, բայց խիստ է ասուած, ոչ օրինաչափ: Եւ՝ յենուելով ինքնութեան անդուլ բացայայտումի ներզգացողութեան խորքին, որ կարող է այս պարագային շփոթի բերել նաեւ իրեն: Պատահական չէ Յ. Օշականի՝ ոչ երկրորդական այն նկատառումը, թէ՛ «Արեւելահայերը ոչինչ տուին, քանի որ բան չէին առած արդէն: **Արեւմտահայերը վրայ տուին հայեցիութիւն ըստած անկշռելի հարստութիւնը**» (Օշական, 1999: 34:– Ընդգծումը՝ բնագրում:– Ս.Դ.):

Յ. Օշականը, պարագայական դիտելով «*լեզուի համեմատական նախնականութիւնը*», զարգացնում է տարակուսելի մէկ ուրիշ միտք, թէ՛ «*Վերլուծական ճշգրիտ եւ երանգաւոր ոճ մը գէշ պիտի պատշաճէր տաղանդաւոր անձերու դրուագներու, զգայնութեանց եւ աշխարհին ձեռնումին: Արեւմտահայ բարբառը շատ արագ իր յեղաշրջումը կատարած՝ զուրկ եղաւ պատրեհութենէն նման գեղեցկութեան մը նուաճումին: Գրաբարը, ֆրանսական ազդեցութիւնը, լրագիրը եւ Պոլիսին համաքաղաքական հանգամանքը զսպանակներ են այդ զգացումին: Քնարական զգայնութեանց սեւեռումին համար այդ լեզուն անյարմար պիտի գար հաւաքական զգայնութեանց պարագ-*

րումին: Արեւելահայոց համար այս էվոլյուսիոնը հազիւ ուրուագծուած է յանձին Զարեանի ոճին (Այս վերջինէն «Տաւրազոմի հարսը»-ին վրիպանքը փաստ մը կու տայ այս պարակրաֆին կարելի ճշդութեան)» (Օշական, 1999: 80):

Յ. Օշականի նախասիրութիւնների խնդիրը դեռ մի կողմ, այստեղ արդէն առկայ է արեւմտահայ եւ արեւելահայ ընդգրկումների ընկալման յայտնի անհաշտութեան բարդոյթը, ինչը վերաճած է հակամարտութեան՝ նոր կողմերի բացայայտման ջանքի, նոր ուժերի ներգրաման, թերեւս ճիշդ կը լինէր նկատել՝ գրական դիրքերի ամրագրման բռնուն ցանկութեան լոյսի տակ:

Գտնելով հանդերձ, որ Ա. Իսահակեանը նախընտրել էր ժողովրդի սրտին հոգեհարազատ երգի կառուցողական եղանակ, թողնելով իմացական գայթակղութիւնը, հրաժարուելով «գրքունակ ոգոյ» փնտռութիւնից, քաջ գիտակցելով պատկերային նախընտրութեան «նահանջի» վտանգները՝ Յ. Օշականը ոճաւորման նման փորձը անուանում է «աշուղի հոգիի կանանչ խորք մը» (Օշական ա, 1912: 33): Ի՞նչն էր բնութագրական այս տեսողութեան մէջ. դա դիտելով «ոտրանաւորներուն մէջ տարածուող մեղամաղծութիւն» (Օշական ա, 1912: 33)՝ պատրաստ էր «ներելու» Ա. Իսահակեանին եւ աւելին՝ յայտնելու, թէ դրա համար «նոյնիսկ» սիրում է նրա երգը, որը «լալկան ու մուրացող կոտորածութիւնը չունի բոլոր ոսմանտիք ու կամաւոր սուգերուն» (Օշական ա, 1912: 33):

Քննադատութեան սլաքի տակ են նաեւ Շ. Կուրդինեանը, Ա. Ծատուրեանը, Գամառ Քաթիպան արեւելահայ չափումների սահմաններում: Ծայրայեղութիւնը հասնում է այնտեղ, որ երկու-երեք կամ աւելի սերունդների բանաստեղծութեան ժառանգութիւնը պատմական ծիրի բերելու փորձով Յ. Օշականը թոյլ է տալիս իրեն յայտարարելու, թէ Խ. Աբովեանի ժամանակներից ի վեր՝ առնուազն ութսուն եւ աւելի տարիներ, արեւելահայ քերթութիւնը զարգացման ուղի չի անցել, «մեծապաղանդ» դէմքերը հրապարակի վրայ առանձնապէս բան չեն աւելացրել՝ թերեւս միայն՝ «...տափակ ոտանաւորներ, որոնց առաքինութիւնն է պարզութիւն եւ հասկնալիութիւն», ուրեմն՝ «...Աբովեանի քերթուածները կը մնան չգերազանցուած 80 տարուան էվոլյու-

սիոնի մը ընթացքին: Չեմ ըսեր, թէ բանաստեղծ մը ժողովուրդէն բաժնուելով է, որ կը մեծնայ, բայց այդ ժողովուրդին միջին գիծին մշտապէս պառկելով ալ չ'աճիր: Վարկածին վկայ՝ ամբողջ արեւելահայ քերթողութիւնը, զոր կարելի է սրտի մեծ հանդարտութեամբ ջորին տալ՝ առանց որ հայ գրականութիւնը բան մը կորսնցնէ» (Օշական, 1999: 179):

Արդեօ՞ք այդպէս է, երբ անմիջապէս խորհուրդ է տալիս նկատի առնել, թէ «Տէրեան երեսոյթ մըն է անոնց մօտ, զոր չհասկցան յետպատերազմեան քերթողները, ծանր լուծի ներքեւ չէ կրցած (այսինքն՝ «յետպատերազմեան» քերթողութիւնը – Ս.Դ.) ազատագրուիլ: Ձեռական քանի մը նորութիւնները գործն են ներգաղթած քանի մը արեւմտահայերու» (Օշական, 1999: 179-180): Իսկ՝ որո՞նք են այդ արեւմտահայերը, Յ. Օշականը «խոհեմաբար» չի մատնանշում, աւելի ճիշդ՝ չի կարող «վտանգել» նրանց՝ անուն յիշատակելով:

Ակնարկ չէ սա, այլ առաջին հերթին՝ ատելութեան բարդոյթի արձագանգ, եւ այն էլ՝ Յ. Օշականի մեծութեան պարագային, ինչը կազմուած է քաղաքական գնահատութեան ենթագիտակից ընկալման հիմքով: Անգամ Վ. Տէրեանին կամ Ե. Չարենցին «փրկութիւն չէր լինելու»: Մնում է միայն հարցնել խորունկ ցաւով, թէ այդ ինչ գնով պատմութեան հոլովոյթում երկու հանճարները կարողացան հաստատել իրենց ողբերգական առաջնային դերակատարութիւնը:

Մի՞թէ նոյն Յ. Օշականը առաջիններից չէր, երբ Զմիւռնիայի «Հայ գրականութիւն» հանդէսի էջերում դեռ քսաներորդի առաջին տասնամեակներին արձանագրել էր արեւելահայ Աւ. Իսահակեանի հանդէպ պոլսահայ քննադատութեան որոշ պաղարինութիւնը, ինչի ընկալումը պայմանաւորուած էր նախ եւ առաջ «Կովկասը չգիտնալու» տպաւորութեամբ, երբ շեշտադրում էր նաեւ շրջապատի անտարբերութիւնը. «Ու կը խորհիմ որ թրքահայերուն կողմէ իր տաղանդին հանդէպ պահուած հանդարտութիւնը կը փոխարինուի, հոն իր բնիկ հողին վրայ խանդաղափանքով լեցուն հիացումով մը: Իր երգերուն մէկ մասը գրած է ժողովուրդին շրթունքը» (Օշական ա, 1912: 32):

Բայց միայն աշխարհագրական ընկալումով պայմանաւորուած գործօնով բացատրել Աւ. Իսահակեանի՝ հայութեան երկու հատուած-

ներում ճանաչումի տարբերությունը, կարծում ենք, բաւարար չէ: Չի կարելի անտեսել ազդեցությունների եւ միջավայրերի ներգործությունը, գեղագիտական տարբեր սկզբունքների՝ իր նկատած «*բաւական բաց տարբերությունը*» (Օշական ա, 1912: 32): Հենց Աւ. Իսահակեանի առիթով էլ Յ. Օշականը բացում է այդ տարբերությունը. «*Ռուսահայ գրականությունը սկիզբէն ի վեր, իր անդրանիկ մշակներուն ներարկած ոգիէն տարուելով կը ձգտի առաւելապէս **օգտակարին** (utile): Հոն գրականութեան պարտականութիւնն է խանդավառել սերունդները հանդէպ մեծ դպրերու, փութացնել զարթօնքը ազգային գիտակցութեան: Իմաստասիրական դրոյթիւնները մեր մէջ փորձուելէ առաջ արդէն Կովկասի մէջ արմատ նետած կ'ըլլան: Գրագէտներուն մեծ մասը հոն ունի բարոյախօսի ծանր ծիրանին, ու անոնց ըրած Գրականութիւնը հաւաքքի յոյսի հետապնդումն է*» (Օշական ա, 1912: 32:– Ընդգծումը՝ բնագրում:– Ս.Դ.):

Գուցէ դա այդպէս է, միայն թէ Յ. Օշականը, չգիտես ինչու, Աւ. Իսահակեանին տրուած բնութագրերում դեռ տարուբերում է «աշուղ» եւ «բանաստեղծ» հասկացութիւնների միջեւ: Հաւանաբար, դրանք հոմանիշային արժէքներ են իր պատկերացումներում՝ հեռու տեսութեան մէջ պատմականութեան որոշ սահմանագծից: Մի այլ տեղ, թէւ գգուող ջերմութեամբ, Աւ. Իսահակեանի մէջ որսում է «*գրեթէ գեղջուկ երգիչ մը*» (Օշական ա, 1920: 1): «*Նոյն իսկ արտայայտութեան ձեւը, որ աստիճան մը անկախութիւնը կը պահէ ուրիշներու, ինչպէս Թումանեանին մօտ, չափազանց անձնական, ծփուն ու դիրաբեկ կը ներկայանայ Պ. Իսահակեանի մէջ: Ասկէ՝ կարգ մը առաւելութիւններ,- իրաւունքով եզրակացնում է տեսաբանը,- որոնք բանաստեղծի արժանատի անուն մը բերած են իրեն*» (Օշական ա, 1920: 1): Պատահական չէ այն ոգեղէնութիւնը, որի կողմնորոշումով իր նշանաւոր պօէմում անապատը վերակազմում է իբրեւ «*գիրքի անապատ*» (Օշական բ, 1920: 1) եւ կամ՝ «*միայնութեան ոսկեղէն աշխարհ*» (Օշական բ, 1920: 1): Հետաքրքիր է զուգահեռ ծանօթագրումների լայնահուն ճանաչողութիւնը, երբ «*անապատի*» խորհուրդների տեսողութեան սահմանը հասցնում է Աւ. Իսահակեանից մինչեւ Լորի ու Մոպսսան, ու աւելի հեռուն՝ մինչեւ Ֆլորէր, Շաթոբրիան, Վիկտի, Լը

Քոնթ դը Լիլ, նրանց «մարմարակերպ կառոյցները, որոնք աւազնե-
րուն հեղանուր ու անփայլ կրակը կարծես կ'արտաշնչեն իրենց էջե-
րէն» (Օշական ք, 1920: 1):

Նոյնատիպ ծաւալումներում տեսանելի է մարդկային հոգեւոր
կապերի շարունակական որոնում, ուր լուծումները հայեցողական չեն
մնում, թափանցում են գեղագիտական հետաքրքրութեան ոլորտ, երբ
փորձ է արւում գտնել իմացականութեան ու զգայնութեան միջեւ
«հաշտութիւնների» սահմաններ. «*Բայց այս աշուղը դժբախտութիւնն
ունէր շուրջ ծանծրանալու ու մա'նաւանդ՝ ունենալու հոգի մը, զոր
մրաժումի մեծ ուրուականները իրենց բռնաւոր-իշխանութեան տակ
ծգած էին*»: Եւ բերում է նոյնքան ամփոփ եւ անսխալ իր այն տպաւո-
րութիւնը, թէ Աւ. Իսահակեանի «...*իմացականութիւնը շուրջ գրաւեց
իր զգայութեան պալատը*» (Օշական ա, 1912: 36):

Ասուածը թւում է նուրբ դիտարկում, հոգու ծալքերի բարձր հա-
սողութեան եւ ներզգայութեան գեղագիտական ընկալման վկայու-
թիւն:

Ճիշդ է, որ Աւ. Իսահակեանի ստեղծագործական շերտերի
հանդէպ Յ. Օշականի վերապահ եւ ոչ հազուադէպ ժխտական մօտե-
ցումները արձանագրուած են աւելի վաղ շրջանի քննադատական
տարբեր նօթերում, սակայն «*Ճակատամարտ*»-ի 1920-ի սեպտեմբե-
րեան յաջորդական չորս թիւերի մէջ է, որ նա համակարգում է հա-
յեացքի ուղղութիւնը՝ քննական մասնաւոր նիւթ դարձնելով «*Աքու-լա-
լա Մահարի*» նշանաւոր պօէմի հարցադրումներից բխող հին ու նոր
մեկնութիւնները: Գտնելով հանդերձ, որ «*Աքու-լալա Մահարի*» պօէմը
նշանակալի ստեղծագործութիւն է աշխարհի եւ անհատի յարաբերու-
թեան, ժամանակի մէջ եւ ժամանակից դուրս քննական խորհուրդնե-
րի փիլիսոփայական հակումութեան սուր հարցադրումով, Յ. Օշա-
կանը խանդավառ չէ գեղարուեստական լուծումներից: Նա չի կիսում
այն թուացեալ տպաւորութիւնը, թէ պօէմը կարելի է նկատել «*մեծա-
տաղանդ գործ մը, որ դարագլուխ մը կը բանայ Արեւելահայ գրական-
նութեան մէջ*»:

Ու ճիշդ հող է, որ ես դէմ կ'երթամ հասարակաց հիացումին»
(Օշական ք, 1920: 1):

Յ. Օշականը գտնում է, որ պօեմի գեղարուեստական մասը անխնամ է, թէեւ գիտի, որ առհասարակ Ա. Իսահակեանի պօեզիայի «անբաժան առաքինությունը կշռոյթի չխաբող ներկայութիւնն է» (Օշական ք, 1920: 1): «Անոր նկարագրութիւնները չտեսնուած, չջօշափուած, չապրուած ու արոր համար տպատրոպիւն չծգող տարտամ պատկերացումներ են: Բանաստեղծին պակսած է ուժը՝ ուրուագրումներէն, հասարակ ու գունաւոր սեւագրութիւններէն՝ դուրս բերելու հզօր ու ջղուր ու կենդանի նկար մը, որ դիմացէն քեզի կը պոռայ իր գոյութիւնը, ու յարգանքի կը հրաւիրէ»: Այն կարծիքին է, որ այստեղ հեղինակը իւրատեսակ դիմակայութեան սիրոյն «զոհած է **գոյնը**..., զոհած է **կատարելութեան** դժնդակ երազը»...: «Այն արեւն է, որ անիկա լրացնելու կը վազեն դժբախտ ածականներ, վխտալու չափ առատ ամէն մէկ բառի կոնակին: Ածականը հացկալալկն է միշտ, ու Պ. Իսահակեան առանց խղճահարութեան բացած է իր պարբերութեան դուռները անոր խուժումին:

Ու ածականներու ամբոխումը տեսակ մը շնորհագրկում կը բերէ անոր օրօրուն ուրանաւորին: Մենք, որ գոյականը կը սիրենք խօսքի մէջ, իբր ամէնէն արու մասը **Ֆրագին**, մենք, որ բայերուն կրնանք հանդուրժել, անոնց գործողութիւնը մանաւանդ փնտրելով, չենք տանիր այդ աւելորդ, այդ ինքնակոչ, այդ աղմկոտ ու երկկենցաղ մականբոյծները, ու վա՛յ այն քերթողին, որուն կապարճէն նետը կը պակսի՝ անոնց հալածանքին» (Օշական ք, 1920: 1:– Ընդծումները՝ բնագրում:– Ս.Դ.):

«Արդի քննադատութեան հայր» (Օշական ք, 1912: 17) եւ կենսագրական մեթոդի հիմնադիր Սենթ Բէովին բազմիցս դիմած տեսարան Յ. Օշականը պօեմի կառոյցից կարծես չի կողմնորոշում, թէ հեղինակի ապրած կեանքը ի՞նչ չափով է միջամուխ եղել ճանապարհի ժխտական յաճումների մղելու հարցում, բայց կասկածում է, թէ արդեօք «Իսկական նաւաբեկութեան եղերե՞րդ մըն է «Աբու-լալա Մահարի»ն, հսկայ նզո՞ւլք մը ժամանակակից այնքան ճղճիմ հաճոյապաշտութեան դէմ, որ մարդերը գործիքը կը դարձնէ անորակելի կիրքերու, որ կինը՝ նոյնիսկ զմոռուած ազնուականութեամբ ասպետուիին՝ կը հանէ իր առագաստէն ու իր մարդուն թելերէն...:

Ասոնք մուօ էջեր են ինծի համար, վասնզի գրողը կ'ապրի տակաւին, ու անոր կեանքին բոլոր երեսները, ու անկիւններն ու հեռանկիւնները լոյսի չեն ինկած: Վերլուծողին համար իմաստասիրութիւնը անոր կեանքէն հանելու այս տեսակ փորձ մը, առաջին իսկ քայլին, կը բախի անկարելիին...» (Օշական գ., 1920: 1): Նոյնքան խիստ է եզրակացութիւնը՝ «Ի՛նչ անքնական, անմարդկային, անիրական, որ եւ է ձեռով, ուղտերու քամակին, արեւու վրայ խոյանալու այդ ծիծաղելի ու հասարակ տօնքիշօտութիւնը» (Օշական գ., 1920: 1):

Յ. Օշականի հետեւութիւնը նպատակ ունի դուրս բերելու դարակգրի արեւմտահայ ընթերցողին խափալեանական «պատրանքի» քարոզից եւ համակրանքի «պարաս» օրօրից. «Ու պարաս պեղն է, որ հարց կու տամ ինծի, ո՞ր է այս քարոզին իմաստասիրական խորքը, եւ ո՞ր է մա՛նաւանդ անոր համապատասխան ձեւին շքեղութիւնը:

Ժխտումը, մանաւանդ ռուս անիշխանական ահաւոր գրականութենէն վերջը ամէնէն հասարակ զառիթափն է որոնող մարդի մը համար» (Օշական գ., 1920: 1), - քաղաքական գիրք շնչով ամփոփում է արեւմտահայ տեսաբանը:

Աւ. Իսահակեանի առիթով հնչեցուած գնահատականների դէմ 1946-ին, Յ. Օշականի դէմ սանձագերծուած հալածանքի շրջանում (տե՛ս՝ Դանիէլեան, 2023: Ա-Բ), ծառանում է բանաստեղծ, Պէյրութի «Անի» ամսագրի խմբագիր Վահէ-Վահեանը՝ յատկապէս մեկնելով «Հայ գրականութիւն» (Երուսաղէմ, 1942) դասագրքում Աւ. Իսահակեանին տրուած բնորոշումներից, ինքն էլ իր հերթին ընկնելով ծայրայեղութեան մէջ, երբ տարօրինակ է համարում նոյն Յ. Օշականի՝ 1946-ին Աւ. Իսահակեանի առիթով վերբերած բնութագիրը. «Եւ հիմա մի՛ հարցնէք, թէ ի՛նչ հրաշքով... Օշականի գրիչին մէկ հարուածովը, նոյն Աւ. Իսահակեանը կը վերածնի՝ այս անգամ «անուշիկ երգիչ»...» (Վահէ-Վահեան, 1946: 223)²:

² Պատահական չէ, որ Յ. Օշականը 1947-ին գրում եւ «Պրոմէթէոս» գրչանու-նով Աւ. Իսահակեանին է ուղարկում «Պատասխանը» խորագրով թատերախաղը (տե՛ս Սնապեան, 1984: 22-23):

Շատ հեռու չէ արեւելահայ դէմքերի եւ Աւ. Իսահակեանի շուրջ Յ. Օշականի զարգացրած կարծիքի հանդէպ հայրենի քննադատ Հրանտ Թամրազեանի տեսակէտը, որը թիրախ ընտրեց արեւմտահայ գրագէտի մեկնական տեսողութեան ամբողջութիւնը, նրա «քննադատութիւնը» համարելով «խիստ հակասական»: «Օշականն ունէր մի ծանր թերութիւն,– գրում է նա Երուանդ Ազատեանի գրքի յառաջաբանում:– Նա օրկանական հակակրանք, արելութիւն, անգամ թշնամանք ունէր արեւելահայ գրականութեան նշանաւոր երեւոյթների նկատմամբ: Նա մաղձով էր խօսում Յովհաննէս Թումանեանի, Աւ. Իսահակեանի, Եղ. Չարենցի մասին, թերագնահատում արեւելահայ հայրուածի գրականութիւնը՝ Աբովեանից մինչեւ նորագոյն շրջանը: ...Պարմութիւնն անողոք է, պէտք է իրերը տեսնել այնպէս, ինչպէս կան եւ, ինչպէս շէքսպիրեան հերոսն է ասում՝ ո՛չ աւելացնել, ո՛չ պակասեցնել» (Թամրազեան, 1988: 3):

Ինչ մնում է Աւ. Իսահակեանին, նրա կարծիքները Յ. Օշականի մասին հիմնականում արտայայտուել են նամակներում: «Հայրենիք»-ի խմբագիր Ռուբէն Դարբինեանին Վենետիկից ուղղուած 1924-ի Ապրիլ 3 թուակիր նամակում հակասական կարծիք է յայտնում ամսագրում նոյն տարուայ Փետրուարին լոյս տեսած «Շահապազ» վիպակի մասին. «...համ լաւ է, համ գէշ: Ամէնից առաջ շարք սուր բան կայ, ոչ հոգեբանական: Երկրորդ՝ դժուար է կարդացում, շարք է պրկուած լեզուն, ոճը: Նոր անկիւններից նայած՝ հետախուզող է: Բայց այս լոյսերի հետ՝ սրտներնեքը շարք են եւ ապրող գրականութիւն չէ. յստակ, քիւրեղացած չէ, եւ մանաւանդ անկեղծ չէ. նման է ֆուրուրիստներին, որ ասում են, թէ՛ գրականութիւնը անկեղծ չպիտի լինի, այլ՝ կեղծ, արուեստական, այսինքն՝ արուեստով շինուած...» (Իսահակեան, 2021: 26): Նոյն կարծիքը նա զարգացնում է մէկ տարի անց (12 Փետրուար, 1925, Վենետիկ), նոյն ոգով՝ այս անգամ դժգոհելով Մերութան Պարսամեանից, որը համարձակուել է «անտեսել» իր «Լիլիթ»-ը եւ «երկինք հանել Օշականի բռնազբօսիկ «Շահապազ»-ը իր անբնական հանգոյցով» (Իսահակեան, 2021: 98):

Նա շարունակում է հեռակայ, բայց շահագրգիռ բանավեճը Օշականի շուրջ եւ Օշականի հետ՝ յայտարարելով, թէ «Ամենալաւ

քննադատը ես ինքս եմ իմ գրուածքների մասին», փորձելով պաշտպանուել. «Նախ եւ առաջ՝ գիտեմ թրքահայ գրողների փչացած, ֆրանսացած ճաշակը, գիտեմ Օշականի ամբարտաւան քնաւորութիւնը, նրա հալոյածական աշտոյթիւնը եւ իմ դէմ ունեցած թշնամութիւնը, որ վաղուց է, այն օրուանից, երբ Պոլիս էի եւ քննադատուում էի նրանց սիմբոլիզմն ու ֆրանսական գրականութեան կողոպուլը՝ նրանց մեծ ու փոքր գրողների կողմից» (Իսահակեան, 2021: 97):

Այստեղ վկայաբերում է նաեւ Վահան Նաւասարդեանին, որը գտնում էր, «թէ Օշականը իր թրքահայ խմբով ալրելով ալրում է ռուսահայերին ու նրանց գրողներին, ու բղաւում է, թէ՛ «մոխիր պիտի դարձնեմ Իսահակեանին. նա ո՞վ է, որ իրեն մարգարէ է ծախում, անապար գնում...» (Իսահակեան, 2021: 97):

Երբեմն Աւ. Իսահակեանը Յ. Օշականի մասին շատ աւելի ենթակայական ու բացայայտ անարդար գնահատականներ է տուել, որտեղ կան այսպիսի անհանդուրժելի տողեր. «էդ ի՞նչ լեզու է նրա հայերէնը... Դա իւնիթորի թէ իդիոդի լեզու է... հայերէ՞ն է թէ հիթիթերէն, բաբելերէ՞ն է թէ պապականերէն... Նրա գրականութիւնը բռնազբօսիկ բարեկենդան է... խորհրդածութիւնների խոր վիրապ, որտեղ ընթերցողը կը նահապակուի քաղցած ու ծարաւի...» (Պէշիկթաշեան, 1963: 21:– Ընդգծումը՝ բնագրում:– Ա.Դ.): Յ. Օշականի լեզուի մասին այս խառնափնթոր գնահատականը նա ամփոփում է նոր ծայրայեղ դիտարկումով. «Աստուած վկայ, որ էդ Օշական անունով մարդը պարզապէս պայծառասպան ու լուսապիղծ մի դիւահար է: Բանազող չէ, այլ՝ բանաւազակ» (Պէշիկթաշեան, 1963: 21):

Իսկ Յ. Օշականը կեանքի մայրամուտին ըստ էութեան բիրեղացրել էր ժողովրդական մտածողութեան մասին իր ըմբռնումները, որոնց մէջ՝ առաջնային եւ վերախմբագրուած մօտեցումով խտանում է Աւ. Իսահակեանի դիմանկարը: Սա փաստում է, որ Յ. Օշականի մտքի եւ պատկերացումների մէջ եղել են նաեւ խորքային վերաթելորումներ: Քննադատը յետահայեաց խմբագրում է գնահատութեան իր երբեմնի խստավարժ մօտեցումները՝ անակնկալ եւ գորովով յայտարարելով, թէ ուշ շրջանում էլ, օրինակ, Աւ. Իսահակեանը մնում է 1900-ի երազ օրերուն բանաստեղծական քնարական գիծը պահող ա-

ռաջնորդող ուժ. «1945ին Աւետիք Իսահակեան,- գրում է նա,- ոչ միայն հայոց հայրենիքին պատկազարդ վարպետն է, այլև Սփիւռքի վրայ ճառագայթող գեղեցկութիւն մը: Աւետի քան յիսուն տարիներ Աւետիք Իսահակեան ապրեր էր բանաստեղծի դժուար իր կեանքը: Ու դուք հազիւ կը գուշակէք, թէ որքան ծանր են թելադրանքները սա հաստատմին» (Օշական, 1946: 90): Եւ ամէլին՝ «Անկիւնադարձ մը ըրած է իրմով արեւելահայ քնարերգութիւնը, երբ ժողովրդական մոթիֆներու վրայ դարձուցած է լայն ուշադրութիւն: Բայց գիտեմ, թէ այսօրուան մեզի խօսիլ թուող փայլուն բառերու շարողները որքան շուտ կը դալկանան ժամանակին մէջ: Ա. Իսահակեան մէկէ ամէլի գլուխ-գործոցներ տուած է իր **աշուղականով**:

...Արեւելահայ քնարերգութիւնը իր պարզութիւնը, իր կշռականութեան, տաքութեան շնորհներէն շատ բան պարտական է Աւետիք Իսահակեանին» (Օշական, 1946: 93:– Ընդգծումը՝ բնագրում:– Ս.Դ.):

Եզրակացութիւն

Յակոբ Օշականի եւ Աւետիք Իսահակեանի գեղարուեստական ու քննական ըմբռնումների շուրջ աշխատանքը բերում է նոր վերլուծական շերտեր, որոնք ցոյց են տալիս երկու գրողների վերաբերմունքի գծերը: Դրանք Յ. Օշականի պարագայում նպատակ ունեն երեւան հանել ոչ այնքան Աւ. Իսահակեանի հետ իր տարընթերցումները, որքան արեւելահայ եւ արեւմտահայ գրական հայեացքների տիպաբանական որոշիչ տարբերութիւնները: Աւ. Իսահակեանի գնահատականները յաճախ մեկնում են Յ. Օշականի հանդէպ իր վերապահ դիրքից, ապա վերաճում արեւմտահայ գրականութեան մասին ընդհանրացնումների փորձի:

Բոլոր դէպքերում սրանք երկու խոշորագոյն գրագէտների հանդիպադրումներն են, որոնք հարստացնում են գրականութեան պատմութեան ընկալման նորագոյն միտումները եւ բացում գեղագիտական քննութեան հնարաւորութեան նոր դռներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. **Դանիելյան Ա.**, Վերջին ըմբոստացումը Օշականի դեմ. տրտմութիւն եւ դիմադրական ներուժ // Ազգ / յանելումաժ «Մշակոյթ», Եր., 2023, 20-26 Յունուար, Ուրբաթ, թիւ 2(5737), էջ Ա-Բ:
2. **Թամրազեան Հր.**, Արդար չափ ու կշիռ / Ազատեան Երուանդ, Գրական գեղարուեստական սեւեռումներ, Լա Վըրն, Գալիֆորնիա, հրատ. «Ամերիկահայ միջազգային Գոլէճ», 1988, յառաջաբանը, էջ 1-7:
3. **Իսահակեան Ա.**, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 14 / Նամակներ (1924-1957), Եր., «Էդիթ Պրինտ», 2021, 1136 էջ:
4. **Պէշկեաշեան Ն.**, «Աւետիք Իսահակեանը ուրիշ գրողներու մասին» // Հայրենիք / ամսագիր, Պոսթըն, 1963, ԽԱ. տարի, Ապրիլ, թիւ 4(41), էջ 20-22:
5. **Սնապեան Պ.**, Յ. Օշական թուականներով եւ թիւերով // Բագին / ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, 1984, ԻԳ. տարի, Յունուար-Փետրուար, թիւ 1-2, էջ 4-32:
6. **Վահէ-Վահեան**, Վկայութեան մը ողբերգութիւնը // Անի / ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, 1946, Ա. տարի, Յուլիս, թիւ 4, էջ 221-224:
7. **Օշական Յ.**, Աբու-լալա Մահարի (հեղինակ Ա. Իսահակեան) // Ճակատամարտ / օրաթերթ, Կ. Պոլիս, 1920, Նոր շրջան, տասներորդ տարի, 5 Սեպտեմբեր, թիւ 546 (2367), էջ 1:
8. **Օշական Յ.**, Աբու-լալա Մահարի (հեղինակ Ա. Իսահակեան) // Ճակատամարտ, 21 Սեպտեմբեր, թիւ 559 (2380), էջ 1:
9. **Օշական Յ.**, Աբու-լալա Մահարի (հեղինակ Ա. Իսահակեան) // Ճակատամարտ, 26 Սեպտեմբեր, թիւ 564 (2385), էջ 1:
10. **Օշական Յ.**, Անկիւնադարձ մը (Աւետիք Իսահակեանի յոբելեանին առիթով) // Սիոն / ամսագիր կրօնական-գրական-բանասիրական, Երուսաղէմ, պաշտօնական հրատ. Երուսաղէմի Պատրիարքութեան, 1946, Ի. տարի, Նոր շրջան, Ապրիլ-Մայիս, թիւ 4-5, էջ 89-92:
11. **Օշական Յ.**, Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 1999, 246 էջ:
12. **Օշական Յ.**, Մարդոց քովն ի վեր (Հարիւրամեակի մը մէջէն) // Սիոն / ամսագիր կրօնական-գրական-բանասիրական, Երուսաղէմ, պաշտօնական հրատ. Երուսաղէմի Պատրիարքութեան, 1938, ԺԲ. տարի, Նոր շրջան, Ապրիլ, թիւ 4, էջ 118-122:

13. **Օշական Յ.**, Ռուսահայ գրականությունն. Անտիս հստակեան // Հայ գրականություն / Հանդես ամսօրեայ գրական, գիտական եւ գեղարուեստական, Զմիռնիա, 1912, Ա. տարի, 1/14 Մայիս, թիւ 11, էջ 31-37:
14. **Օշական Յ.**, Ռուսահայ գրականություն. քննադատությունը անոնց մէջ. Գ. «Գարուն» ամսանախ (Մոսկուա, 1912) // Հայ գրականություն, 1912, Բ. տարի, 1/14 Նոյեմբեր, թիւ 4, էջ 16-23:

REFERENCES

1. **Danielyan S.**, *Verjin ýmbostats'umy Oshakani dem. trtmut'yun ev dimadrakan neruzh* [The Last Outbreak Toward Osahakan: Sadenes and Resistance] // *Azg / havelvats* "Mshakuyt'", Er., 2023, 20-26 January, Friday, N 2(5737), pp. A-B:
2. **T'amrazyan Hr.**, *Ardar ch'ap' u kshir* [Fair Judgment] / Azaryan Yervand, *Grakan gegharvestakan severumner*, La Vern, California, publ. "Amerikahay mijazgayin k'olej", 1988, harajaban, pp. 1-7.
3. **Isahakyan Av.**, *Yerkeri liakatar zhoghovatsu 14 hatorov* [Complete works in 14 volumes], vol. 14 / *Namakner (1924-1957)*, Er., "Edit Print, 2021, 1136 pages.
4. **Pesh'ikt'ash'lyan N.**, "Avetik' Isahakyaný urish' groghneri masin" ["Avetik' Isahakyan About Other Writers"] // *Hairenik / monthly*, Boston, 1963, KhA tari, April, N 4(41), pp. 20-22.
5. **Snappyan P.**, *H. Oshakan t'vakannerov ev tiverov* [H. Oshakan with Years and Numbers] // *Bagin / amsagir grakanut'yan ev arvesti*, Beirut, 1984, IG. tari, January-February, N 1-2, pp. 4-32.
6. **Vahe-Vahyan**, *Vkayut'yan my voghbergut'yuný* [One Testimony's Tragedy] // *Ani / amsagir grakanut'yan ev atvesti*, Beirut, 1946, A. tari, July, N 4, pp. 221-224.
7. **Oshakan H.**, *Abu-lala Mahari (heghinak A. Isahakyan)* // *Chakatamart / daily*, Constantinople, 1920, Nor shrjan, tasnerord tari, 5 September, N 546 (2367) p. 1.
8. **Oshakan H.**, *Abu-lala Mahari (heghinak A. Isahakyan)* // *Chakatamart / daily*, Constantinople, 1920, Nor shrjan, tasnerord tari, 21 September, N 559 (2380), p. 1.
9. **Oshakan H.**, *Abu-lala Mahari (heghinak A. Isahakyan)* // *Chakatamart / daily*, Constantinople, 1920, Nor shrjan, tasnerord tari, 26 September, N. 564 (2385), p. 1.

10. **Oshakan H.**, *Ankyunadardz mÿ* (Avetik' Isahakyan hobelyanin aritov) [*One Reversal (on the anniversary of Isahakyan)*] // Sion / amsagir kronakan-grakan-banasirakan, Jerusalem, pashtonakan hrat. Jeruslemi Patriark'ut'yan, 1946, I. tari, Nor shrjan, April-May, N 4-5, pp. 89-92.
11. **Oshakan H.**, *Zugaksh'ir arevelahay ev arevmtahay grakanut'yants'* [The Balance of Eastern and Western Armenian Literatures], Beirut, Hamazgayini "Vahe Setyan" publ., 1999, 246 pages.
12. **Oshakan H.**, *Mardots' k'ovn i ver (Haryuramyaki mÿ mejen)* [Among the people (Over the Course of 100 Years)] // Sion / amsagir kronakan-grakan-banasirakan, Jerusalem, pashtonakan hrat. Jeruslemi Patriark'ut'yan,, 1938, ZhB. tari, Nor shrjan, April, N 4, pp. 118-122.
13. **Oshakan H.**, *Rusahay Grakanut'enen. Avetis Isahakyan* [From Russian-Armenian Literature: Avetis Isahakyan]// Hay grakanut'yun / Handes amsorya grakan, gitakan ev gegharvestakan, Smyrna, 1912, A. tari, 1/14 May, N 11, pp. 31-37.
14. **Oshakan H.**, *Rusahay Grakanut'yun. k'nnadatutyuny anonts' mej. "Garun" almanakh (Moscow, 1912)* [Russian-Armenian Literature: Criticism Among Them] // Hay grakanut'yun / handes amsorya grakan, gitakan ev gegharvestakan, Smyrna, 1912, B. tari, 1/14 November, N 4, pp. 16-23.